01/10.1/2915-09
2009-05-07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հ. Հակոբյանի, Գ. Մելիքյանի, Ս. Ավետիսյանի և Է. Շարմազանովի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 40-Ն որոշման N 1 հավելվածի 127-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ապրիլի 3-րդ տասնօրյակում Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը պետք է ներկայացնի «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը։ Նշված նախագծում իրացվելու են «Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, որոնցով պայմանավորված՝ նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Համբարձումյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-580-27.03.2009-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին

***Հոդված** 1.* «Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 11-ի, ՀՕ-226 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7 –րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«7. Կազմակերպության անվճարունակության (սնանկացման), ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով լուծարման դեպքերում չվճարված աշխատավարձերը վճարվում են օրենքով սահմանված կարգով։»։

***Հոդված** 2.* Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Գիշերային եւ արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանվում է հավելում՝ ժամային դրույքաչափի մեկուկես անգամից ոչ պակաս չափով։

Գիշերային ժամանակ է համարվում ժամը 22-ից մինչեւ 6-ը։»։

***Հոդված** 3.* Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Ոչ աշխատողի մեղքով պարապուրդի մեկ ժամի համար վարձատրության նվազագույն դրույքաչափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ։»։

***Հոդված** 4.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հիմնավորում

«Աշխատանքի վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Նախագծով առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է գործող օրենքի դրույթներն աշխատանքային օրենսգրքի դրույթների հետ համապատասխանեցմամբ։